

գործակալ Նոյն Թուականի յիշեալ արձանագրութեան վերին 13րդ տողից: Այդպէս բաւականին վարդապետութեամբ է կատարուած. սակայն փութագրող գուրդ լինելով հին վարդապետների ուսեր ծալակից, ինքն իրան դաւաճանել է, որով խմբերի բեւեռներին, ըստ իւր քանից, առաջով անտուգիւր անգործ թիւն եւ հարեւրով ուրիշ նշաններ: Վանի արձանագրութիւնների մէջ բեւեռները առհասարակ դատարարութեամբ են ձախ ձեռքից դէպ ի աշ, այսինքն սուր ծայրը նայում է աշ կողմը եւ կամ վերեւից դէպ ի ցած սուր ծայրով. իսկ մեր աղետի վրայ պատահում է երբեմն հակառակն եւ բեւեռի սուր ծայրը ուղղած է վերեւ եւ կամ բեւեռը սկզբում է աշ ձեռքից սուր ծայրով դէպ ի ձախ կողմը: Այսպէս դատարարութեան սեպերի խմբերը ոչինչ չեն նշանակում. բացի դրանից շատ խմբերում սեպերի թիւը պակասում է, ապա ուրեմն նոցա նշանակութիւնն են կորցում է:

Այստե՛ հարց է ծագում թէ, ի՞նչ նպատակաւ է կեղծուած այս աղետը իւր արձանագրութեամբ, հնազանդներին գայլթակելոցն էր համար, թէ եւ հնազանդական ձգտումների համար: Ինչեւիցէ ի վաղուց հետեւ նկատուած է, որ զանազան կեղծիքների առաջադէպ են դարձել յատկապէս սուրբ վայրերը. ս. Երուսաղէմը, Պարսից նահապետական Բերքիւս քաղաքը, մեր Մ. Էջմիածինը եւ այլն:

Հին ժամանակների աղետները շատ ամուր են լինում, եւ Կնուէից ու Բարեւոյնից բնութագրող աղետներ տարուեցան Անգլիա, ուր դարա Բրիտանական Թանգարանի գտար են կարծում. իսկ մեր արձանագրութեան աղետը Մ. Էջմիածնից մինչեւ Մոսկուայ հասնելը երեք կտոր է բաժանւել. երեւի դա էլ նրա հետեւեան մի նշանն է: Դ Մոսկուայէն գրւում այս թղթակցութեան ծղոտների մասով իմ կը թողուէք թղթակցից Մ. Էջմիածնի, որ սակայն չենք կարծեր թէ նշարարութեան հակառակ վկայութիւն ստաւ ըլլայ:

ՓԱՂԱՅԱՅԱՅ



ՊԵՂԱՅԱՅԱՅ ՏԵՍՈՒՆԴԻՆ

Ղինճաւ, 27. Մարտ 1896:

Չար գուշակութիւններ եղած են 1896ի յամար. անցեալ տարւոյն յարուցած խնդիրները չլուծուած, քաղաքական նորիզոնը նորստոր ամպեր կը կուտակին: Նորեակ նիգակակցութիւնն մի կշտորոյն վեգուակը միշտ հաւատարակչիւ պահելու կու ջանար. քայց Ափրիկեան դէպք մը շփոթեց հաշիւներն, եւ քաջ քաղաքակիրթ վկայական ունենալ հարկ չէ

գուշակելու համար թէ հին ուր «խաղաղութիւն, խաղաղութիւն», կ'աղաղակեն, չկայ խաղաղութիւն: Բայց մի տեսութեան քնական կարգը պահենք:

Երաւա: Վիկտորիա Թագուհին, եւ Աւստրիայի Կայսրը տեսակցութիւն մ'ունենցան, որուն այս միջնորդները կը տրուէր թէ վտանգեալ նիգակակցութիւնն աւելի հաստատուն հիմանց վրայ ամրապնդել կ'ուզուի: Բայց նոյն միջոցին Գուրխուլի կոմսն ալ այցելութեան ելած էր ի Բերլին, անշուշտ՝ ինչպէս պիտի տեսնենք, միջնորդելու համար եւ Գերմանիոյ ու Անգլիոյ մէջ ծագած կարծեաց տարբերութիւնը քառնալու, եւ զԱնգլիա երրկակ նիգակակցութեան շրջանին մէջ առնելու:

Ափրիկէ: Շատոնց ծանօթ է արդէն թէ Անգլիա այնպիսի քաղաքականութեան մի կը հետեւի, որ Բիզմարկն անգամ դժուարաւ պիտի կարենար իմանալ: Ամէն կողմանէ դժուարութիւններ կը յարուցուին Անգլիոյ դէմ, քայց յարուցանողն է ինքն — Անգլիա: Իտալիա յաղթունցաւ յԱլքսանդիա: Նիգակական խնդիրը կանանց սեղանին վրայ հանուեցաւ. քայց Անգլիոյ գործնական պատասխանն եղաւ Իտալացոց օգնելու համար — դէպ ի Դոնգոյա (ի Նուրիա) քալել, որպէս զի Կասալա Հարեշներու ծնոքը շանցին: Այս արշաւանքին համար պահանջուած դրամը պիտի առնուի Նիգակական պահեստի դրամագլխէն (500.000 անգլ. ստ.): Գերմանիա, Աւստրիա, Իտալիա, եւ — Անգլիա իրենց հաւանութիւնը տուին. իսկ Իտալիա եւ Իուսիա միջոցին, որով յայտնի եղաւ թէ եւրոպական մեծ պետութիւններն երկու մասի բաժնուած են: Եւ հոս է ահա խաղաղութեան վտանգը. սակայն երբեակ նիգակակցութեան յանկարծ այսպէս գործնալը (վստն գի անտարակուսելի է թէ Միացեալ Նահանգներն ալ միտեալ են այս կողմն), շատ ուրախալի երեւոյթ է շատ մի խնդրոց լուծման համար: Նիգակական խնդրին առաջին զո՞ գնաց Բերլինը, Գաղղիայի արտաքին գործոց պաշտօնական, որուն տեղն անցաւ Բուրժուա: Այս յանկարծական փոփոխութեան պատճառն է Բերլինը «անատակութիւնը», թէ ինչ կրնայ այս քաղաք

նշանակել, առ այժմ՝ զատոնի կը մնայ, քանի որ քարերիչ նուազիկներն իւր նրա-  
ժարման պատճառ կը դնեն “իւր վառա-  
նողջութիւնն ու ընտանեկան հանգամանե-  
րներ..”, քայց որչափ կ’երեւայ “Դոնգոլեան  
խնդրոյն մէջ իւր վարմունքովը յառաջ  
եկած դժուարութիւններն, են քուն պատ-  
ճառ :

Ամեյիկա: Կուքա՝ “Անտիլեան զո-  
հարը..”, ծաշակը զրգոնց Միացեալ Նա-  
հանգներուն, որ իրենց պաշտպանութեան  
տակ առնուլ կ’ուզեն կուքացիները: Սպա-  
նիա մեծապէս յուզուեցաւ, քայց եթէ քիչ  
մը նախատեսութիւն ունենար, թէ այն-  
չափ արին չէր թափուեր ի զուր, եւ թէ  
տեղական ինքնօրինութեամբ մը կը զո-  
հացուէր տեղացւոց պահանջովը: Քանի  
չարեաց առջեւ կ’առնուէր, եթէ այդ նա-  
խատեսութիւնը չպակսէր շատ մը ուրիշ  
— ապամիակեան տէրութիւններու  
ալ: Սպանիա կը պատրաստուի մինչեւ  
նաեւ Ամերիկայի դէմ՝ ցոյցեր ընելու, այս-  
ինքն “Շանճը”, կ’ուզէ “առիժին”, դէմ՝ պա-  
տերազմ մղել....:

Ասիա: Չին, Ճապոն, — արհ Ասի-  
այի բախտին հետ խաղացողները: Յաղ-  
թական Ճապոնը կ’ուզէ իւր օրինաւոր  
յաղթութիւնն արժեցնել տալ, քայց  
խրախուսեալ Չինը նախամեծար կը հա-  
մարի անձրեւէն ազատիլ եւ — կա-  
պարին հանդիպիլ:

Աշխարհիս շուրս մասերուն մէջ դի-  
զուած հրապին նիւթեր կայծի մը կը սպա-  
սեն ուրեմս, եւ վայ անոր որ յանդգնի  
կայծարծակ ջարը մերձեցնել. պիտի  
ծագի աշխարհակուլ հղճն մը, զոր պիտի  
մարեն քանի մը տէրութեանց աւերակ-  
ները: Պատմութիւնը շատ անգամ հաս-  
տատած է, թէ երկու կոռուղներու մէջ  
երրորդն է միշտ շահողը. ո՞վ պիտի ըլլայ  
այս շահողը...: Յոռեւտութիւնը կ’ա-  
տենը, քայց լատեսութեան համար ալ  
ըստ քաւականի պատճառներ չեն մեծա-  
մեծ աւերութեանց դարչիմները, դիւան-  
ներն, եւ — պատերազմի խանձի հոտը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՈՒՄՆԱԿԱՆ

ՄԱՏՅԱՆԱԳՐԱԿԱՆ — Աքաբուր զրոյցը Մովսէս Խո-  
րենացւոյ պատմութեան մէջ. 97: — Ուսումնասի-  
րութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան. 101:  
Կենսագրութիւն — Յովակիմ քծիչ Սողոմոնեան.

108:

ԼԵՋՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ — Չայնական ուսումնասիրու-  
թիւն Մարալի բաքաւոն. 113:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Ա. Տաղաշափք եւ տաղք. 115:

### ԱՅԼԵԻԾԱԿ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 1. Հայաքնակ երկիրներ: — 2.  
Վարդեր: — 3. Մանասարեան կտակի արդի  
վիճակը: — 4. Համառոտ վիճակացոյց Նիսա-  
տանի հայոց: — 5. Տեսիլ Մովսէսի անվանեա-  
կանը: — 6. Պ. Գետադարձի եւ 8. Կոզենի  
աւանդութիւնը: — 7. Պատմութիւն Հնդկաս-  
տանի հայոց. 113:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹՈՐԻ ԺԱՂԱՅՓՈՒՆՔ. 1. Ժողովըր-  
դական զբոյրներ: — 2. Ազգային բարեգոր-  
ծութիւններ: — 3. Դարձեալ գաւառները: — 4.  
Ո՞ր ազգի զբաղանդութիւնն անելի օգտակար է  
մեզի: — 5. Ներսէս Ե. Աշտարակեցւոյ մտա-  
ծած հայ ամսագիրը: — 6. Կրօնական յօդուած-  
ներ: — 7. Արդի աշխարհագր լեզուի ինչպիսի:  
— 8. Ռուսաստանի հայ դպրոցները: — 9. Սկզբ-  
նակ ու քանաստեղծութիւն: — 10. Թուեր ու  
զբաղարտութիւն: — 11. Պր. Գեղըր Բանանեանի  
երեստնուէնըգամակը: — 12. Երկու ուրախակի  
ներայններ: — 13. “Գրչի մշակների փոխա-  
կըսած օժանդակութեան ընկերութիւն”: — 14.  
Հայերէն պատարագի ծայրագրութիւն: — 15. Ժո-  
ղովրդական սովորութիւններ: — 16. Գրական  
ամուրթիւն: — 17. Բարեգործութիւնը պարտաւ-  
որութիւն է: — 18. Բարեգործական ընկերու-  
թեան ընդհանուր ժողովը: — 19. “Ժաղիկ” շա-  
քաթայնները: — 20. Կեղծեալ արժանագրու-  
թիւններ. 121:

### ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 127:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՄԱՐԱԳԻՐ

Կ. ԱՌՓԱՅԵԼ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԹԹՐԵՐԵՆ. ՏԳԱՐԱՆ